

ՀՀ ԳԱԱ-ի և Աթենքի Ակադեմիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր



Սույն թվականի ապրիլի 25-ին Հունաստանի մայրաքաղաք Աթենքում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը և Աթենքի ակադեմիայի նախագահ, պրոֆեսոր Ստամատիոս Կրիմիդիսը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Հուշագրի ստորագրման հանդիսավոր արարողությանը ներկա էին Հունաստանի նախկին նախագահ, Աթենքի Ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Պրոկոպիոս Պավլուպուլոսը, Հունաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանը, Աթենքի Ակադեմիայի նախկին նախագահ Միխաիլ Ստաթոպուլոսը և

Աթենքի Ակադեմիայի գլխավոր քարտուղար Խրիստոս Ջերեֆուսը:

Համագործակցության շրջանակում նախատեսվում է համատեղ իրականացնել գիտահետազոտական ծրագրեր, կազմակերպել գիտաժողովներ, կոնգրեսներ, աշխատաժողովներ, ամառային դպրոցներ, նաև գիտնականների փոխանակման ծրագրեր և գիտական նյութերի հրապարակումներ: Նախատեսվում է նաև համատեղ միջոցառումների իրականացում՝ ուղղված գիտության դերի մասին հասարակական կարծիքի ամրապնդմանը:

Համագործակցությունը կներառի մի շարք ոլորտներ՝ մաթեմատիկա, ինֆորմատիկա և ճարտարագիտություն, մեխանիկա, նոր նյութեր և առաջադեմ տեխնոլոգիա, կյանքի որակ, կենսաբժշկություն և կենսատեխնոլոգիա, կենսաբազմազանություն, կենսառեսուրսներ և էկոլոգիա, կլիմայի փոփոխություն, բնական և տեխնոգեն աղետներ, աստղագիտություն, տիեզերական հետազոտություն և տեխնոլոգիա, պատմամշակութային ժառանգություն և ազգային ինքնություն, մարդ և հասարակություն:

Այս համագործակցությունը կամրապնդի և կզարգացնի հարաբերությունները երկու ակադեմիաների միջև և կնպաստի հայ-հունական բարեկամության ամրապնդմանը:

Հունաստան այցի ժամանակ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ապրիլի 24-ին հայ համայնքի հետ մասնակցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը:

Զորակցություն Իրանի Իսլամական Հանրապետության բարեկամ ժողովրդին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը ցավակցական նամակ է ուղարկել Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահ Մոհամադ Ռեզա Մոխթեր Դեգֆուլին ուղղաթիռի վթարի հետևանքով Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Սեյեդ Էբրահիմ Ռախիսի, Արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի և ուղեկցող պաշտոնատար անձանց ողբերգական մահվան կապակցությամբ: Նամակում նշված է. «Հարգարժան պրոֆեսոր Մոհամադ Ռեզա Մոխթեր Դեգֆուլի,

Մեծ ցավով տեղեկացանք Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռախիսի, Արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի և մյուս պաշտոնյաների անժամանակ մահվան մասին: Երեկ տեղի ունեցած ողբերգական պատահարից հետո Հայաստանի ողջ հանրությունը հույսով սպասում էր իրաշքի, որը, ցավոք, իրականություն չդարձավ: Մեր զորակցությունն ենք հայտնում Իրանի Իսլամական Հանրապետության բարեկամ ժողովրդին և այս ծանր պահին մեր համերաշխությունն ենք հայտնում Ձեզ: Խորապես ցավակցում ենք զոհվածների ընտանիքներին և հարազատներին՝ մաղթելով համբերություն և ոգու տոկունություն»:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ ՍԱՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի միջազգային գիտաժողովը

Սույն թվականի մայիսի 17-18-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Արվեստի հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը. «Այս միջոցառումը յուրօրինակ է՝ հաշվի առնելով «Անահիտ» հանդեսի վիթխարի դերակատարությունը հայ մշակույթի զարգացման ընթացքի լուսաբանման և հանրահռչակման գործում: Սա միջգիտակարգային գիտաժողով է, քանի որ հանդեսն ուներ գրական, գեղարվեստական և հասարակական ուղղվածություն: Հանդեսի կողմնորոշիչները մնայուն արժեքներն են՝ հայ մտավոր մշակույթը, ազգային խնդիրները և եկեղեցու դերը մշակույթի զարգացման և ժողովրդի կյանքում: Այս կողմնորոշիչներն ապահովել են հանդեսի խոշոր ներդրումը մեր մտավոր մշակույթի պատմության մեջ և նաև թողել մեզ որոշ դասեր: Փարիզում լույս տեսնող «Անահիտ» հանդեսը, երբ դեռ չուներ պետականություն (1898-1911 թթ.), կարևորում էր հայերենը՝ որպես գիտական լեզու և նպաստում դրա զարգացմանը, ինչը հարկ է անպայմանորեն շարունակել նաև այժմ»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը նշեց՝ պարբերական մամուլի ուսումնասիրությունն արվեստագիտության կարևորագույն ուղղություններից մեկն է. «Առաջին անգամ հայ ակադեմիական արվեստագիտությունն անդրադառնում է հայ պարբերական մամուլին «Անահիտ» հանդեսի օրինակով: Հայտնի է, թե ինչ մեծ նշանակություն և դեր ունի հայ պարբերական մամուլն արվեստագիտության, արվեստի քննադատության ձևավորման, կայացման և զարգացման գործում:



19-րդ դարից սկսած՝ արևմտահայ և արևելահայ մամուլը բազմիցս անդրադարձել է արվեստի և գրականության հարցերին, և շատ հաճախ այդ հրապարակումները հետազոտողների համար ձեռք են բերում սկզբնաղբյուրի նշանակություն»:

Նա շեշտեց արվեստի քննադատության կարևորությունը. «Ներկայում մեր գիտնականները հեռացել են արվեստի քննադատությունից, և դա ցավոտ հարց է: Կարծում են, որ այս գիտաժողովը խթան կհանդիսանա, որպեսզի մեր գիտնականները գիտական հետազոտություններին զուգահեռ զբաղվեն նաև երաժշտական, թատերական և գեղարվեստական քննադատությամբ: Այս առումով գիտաժողովն ունի նաև կիրառական նշանակություն»:

Գիտաժողովի ժամանակ ավելի քան քսան ուշագրավ զեկուցումներով հանդես եկան առաջատար գիտնականներ ու երիտասարդ հետազոտողներ Հայաստանից և արտերկրից՝ բացահայտելով «Անահիտ» հանդեսի ներդրումը հայ արվեստագիտության՝ երաժշտագիտության, արվեստաբանության, թատերագիտության և ճարտարապետագիտության, ինչպես նաև գրականագիտության ասպարեզում:

Գիտաժողովը գումարվել է «Հայ գեղարվեստական և երաժշտական քննադատությունը XIX դարում և XX դարասկզբին (ձևավորումն ու զարգացման միտումները)» գիտական ծրագրի շրջանակում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը պարբերաբար համալրվում է արժեքավոր գրականությամբ, ինչը մեծապես նպաստում է հետազոտական աշխատանքների շրջանակի ընդլայնմանը: Համալրման գործընթացում կարևորվում են նվիրատվությունները, որոնք ամրացնում են այն գործընկերային հարաբերությունները, որոնք ունի գրադարանը ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանի սահմաններից դուրս:

Ընդհանուր համատեքստում առանձնացնենք վերջերս Մոսկվայից ստացված նյութերը, որոնք հայագիտական կարևոր արժեք ունեն: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարտիկ Յուրիկի Գասարյանը արժեքավոր այս հավաքածուն նվիրաբերեց գրադարանին՝ վստահ լինելով, որ այն ծառայելու է իր նպատակին: Նշենք նաև, որ նվիրատվությունն իրականություն դարձավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանի միջոցով:

Նվիրաբերված գրականության մեջ առանձնանում են ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր նյութերը: Կան նկարներ, գրքեր, թերթեր, արխիվային վավերագրեր:

Նյութերի մեջ առանձնակի կարևորվում են ֆրանսիացի գիտնական, հայագետ Ֆրեդերիկ Մակլերի՝ 1920-1930-ական թվականների արխիվային լուսանկարները և սևագրությունները: Սա մի ժամանակահատված էր, որ անվանի հայագետը հայոց լեզու էր դասավանդում Փարիզի արևելյան լեզուների բարձրագույն դպրոցում: Առանձին թղթապանակում ամփոփված են Մակլերի մի շարք հոդվածներ Հայաստանի մասին:

Նյութերի մեջ են ֆրանսիայի ազգային գրադարանում պահպանվող հայերեն ձեռագրերի պատճենահանված ցանկերը, E. Blochet-ի՝ Փարիզում տպագրված «Peintures de Manuscrits Arabes, Persans et Turcs de la Bibliothèque Nationale» ձեռագրերում գետնից բերված մանրանկարների հավաքածուն:

Ուշագրավ են բանաստեղծ, ֆրանսիական դիմադրության մարտիկ Միսաք Մանուշյանին նվիրված հոդվածները՝ տպագրված «L'Humanité» ֆրանսիական օրաթերթի տարբեր համարներում, ֆրանսիացի գրող Լուի Արագոնի «Le Roman inachevé» բանաստեղծությունների ժողովածուն, Վահե Երկինյանի «Армянская культура в 1800-1917 гг.» գիրքը, Պետրոգրադում տպագրված «Армения и Рим» պատմական աշխատությունը և այլ նյութեր:

Նվիրաբերված ողջ գրականությունն արդեն ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում է և հասանելի է հետազոտողներին:



ՀՀ ԳԱՄ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ ՀՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ



ԱԼԻԽԱՆԻԱՆ
Աբրահամ Իսահակի

Մասնագիտացում՝
Էքսպերիմենտալ ֆիզիկա
Ծննդավայր՝ Թիֆլիս
Ծննդյան ամսաթիվ՝ 04/03/1904
Մահվան ամսաթիվ՝ 08/12/1970
Անդամակցություն՝ ակադեմիկոս

Բնագավառ

Միջուկային, տիեզերական ճառագայթների, միջուկային ռեակտորների, տարրական մասնիկների ֆիզիկա, արագացուցչային տեխնիկա, էլեկտրոն-պոզիտրոն զույգի առաջացման ուսումնասիրություն գրգռված միջուկի էներգիայի ներքին կոնվերսիայի շնորհիվ և ռենտգենյան անցումային ճառագայթման հայտնաբերում:

Կրթություն

Ավարտել է Լենինգրադի պոլիտեխնիկական ին-տը (1928), ֆ.մ.գ.դ., պրոֆ. (1937): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943, թղթ. անդ.՝ 1939): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943):

Պաշտոններ

Աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի ֆիզ.-տեխ. ին-տում (1927-1941), ԽՍՀՄ ԳԱ տեսական և էքսպերիմենտալ ֆիզիկայի ին-տի տնօրեն (1945-1968):

Պարգևներ

Սոցիալիստական աշխատանքի հերոս (1945): ԽՍՀՄ պետ. մրցանակների դափնեկիր (1941, 1948, 1953): Պարգևատրվել է Լենինի (3) և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

ՍԵՎԱԿ
Գուրգեն Գրիգորի

Մասնագիտացում՝
Լեզվաբանություն
Ծննդավայր՝ Թիֆլիս
Ծննդյան ամսաթիվ՝ 15/04/1904
Մահվան ամսաթիվ՝ 16/09/1981
Անդամակցություն՝ ակադեմիկոս

Բնագավառ

Հիմնական աշխատություններ վերաբերում են ընդհանուր լեզվաբանությանն ու լեզվի մեթոդաբանությանը, հայոց լեզվի պատմությանն ու տեսությանը, հայ գրերի և Մեսրոպ Մաշտոցի գործի ուսումնասիրությանը: Հեղինակ է հայոց լեզվի բուհական և դպրոցական դասագրքերի ու ձեռնարկների:

Կրթություն

Ավարտել է ԵՊՀ-ը (1928): Բ.գ.դ. (1948), պրոֆ. (1949), ակադ. (1971, թղթ. անդ.՝ 1956):

Պաշտոններ

ԵՊՀ-ի դասախոս (1931-1937), դոց. (1937-1949), պրոֆ. (1949-1977), հայոց լեզվի ամբիոնի վարիչ (1941-1968): Դասավանդել է նաև Հայաստանի այլ բուհերում, Թբիլիսիի պետ. համալսարանում: ԽՍՀՄ ԳԱ հայկ. մասնաճյուղի գրականության և լեզվի ին-տի բաժնի վարիչ (1941-1943): ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տի ավ. գիտաշխատող (1962-1968), բաժնի վարիչ (1947-1962, 1968-1981): ՀԽՍՀ ԳԱ գիտատեխնիկական տերմինաբանության խորհրդի նախագահ (1969-1981):

Այլ տվյալներ

ՀԽՍՀ (1961) և ՎրԽՍՀ (1970) գիտության վաստակավոր գործիչ:



ՂԱԶԱՐՅԱՆ
Ռաֆայել Ավետիսի

Մասնագիտացում՝
Ռադիոֆիզիկա
Ծննդավայր՝ Արմավիր
Ծննդյան ամսաթիվ՝ 26/01/1924
Մահվան ամսաթիվ՝ 03/11/2007
Անդամակցություն՝ ակադեմիկոս

Բնագավառ

Կիրառ. ինֆորմ. տեսություն, լազերային տեխնիկա՝ լուսի մոդուլում, դետեկտում, մոդերի սելեկցիա, մթնոլորտային լազերային կապ:

Կրթություն

Ավարտել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ին-տը (1951): Տեխ.գ.դ. (1975), պրոֆ. (1978), ակադ. (1996, թղթ. անդ.՝ 1986):

Պաշտոններ

«Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի հիմնադիր և ղեկավար (1991—2005):

Պարգևներ

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի շքանշանով և մեդալներով, ԼՂՀ «Մխիթար Գոշ» շքանշանով (հանուն ԼՂ անկախության երկարամյա պայքարի համար):

Այլ տվյալներ

ԵՊՀ-ում և ԵրՊՀ-ում իր հիմնածամբիոնների (1959-1969, 1976-1983) ղեկավար, ՀՀ ԳԱ ԶԻԻ քվանտային էլեկտրոնիկայի բաժնի վարիչ (1963-1991): ՀՀ ԳԽ կրթության, գիտության, լեզվի և մշակույթի մշտական հանձնաժողովի նախագահ (1990-95 թթ.):



ՀՀ ԳԱՄ 2023 թ. մրցանակակիրները. Հրանուշ Խառատյան

«ՀՀ ԳԱՄ 2023 թ. մրցանակը» հասարակական և հումանիտար գիտությունների անվանակարգում շնորհվել է ՀՀ ԳԱՄ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար մասնագետ, Կիրառական մարդաբանության գիտական թեմատիկ խմբի ղեկավար, պ.գ.թ. Հրանուշ Խառատյանին՝ «Էթնոկերտման/ազգակերտման գործընթացները Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետություններում XX դարում- XXI դարասկզբին» թեմայով վերջին հինգ տարիների ընթացքում հրատարակված աշխատանքների համար: Ընթերցողին ենք ներկայացնում այդ թեմայի շրջանակում կատարած ուսումնասիրությունների հիմնական արդյունքները:

Ունենալիս և ինքնության արտահայտման այլ ձևերի պաշտոնական սահմանափակումները, կրթական, տեղեկատվական, կոլեկտիվ գիտելիքի ձևավորման, ներշնչման գործիքակազմերը, այդ թվում՝ վերջին շրջանում հասարակագիտության կողմից լայնորեն վերլուծվող և օգտագործվող «սոցիալական և կոլեկտիվ հիշողության» ձևավորման քաղաքականությունը: «Էթնոկերտման/ազգակերտման» քաղաքականության վերլուծության մեջ հիմնականում քննարկվում են հասարակությունների ազգաստեղծման քաղաքականության ընթացքում տվյալ հասարակության մեջ առկա մակարդակները: Թուրքիայի դեպքում մասնավոր շեշտադրում է արված էթնոֆորիաներին, հույն, հայ, հրեա, քուրդ էթնոսների և ալեվի կրոնաէթնիկական միավորի նկատմամբ առկա կամ խրախուսվող ատելությանը և/կամ ատելության քաղաքական հրահրմանը: Ադրբեջանի դեպքում քննարկվում են 20-րդ դարի սկզբին էթնիկության ձևի ու բովանդակության ընտրությունը, այդ գործընթացին Ադրբեջանի այլալեզու բազմազգ բնակչությանն ընդգրկելու, դրանում հայ, կովկասալեզու, իրանալեզու էթնիկական միավորների հանդեպ վերաբերմունքի, մասնավորապես նաև հայաստանցիության ձևավորման քաղաքականությունը:

Ըստ Հ. Խառատյանի վերլուծությունների՝ թե՛ քննալական Թուրքիայում, թե՛ ԽՍՀՄ-ում լրջորեն վերահսկվում էին իրենց բնակչության ինքնությունների ձևավորման գործընթացները: Իշխանությունների կողմից խստորեն գրաքննվող լրագրերը, ռադիոհաղորդումները, հատուկ կազմակերպվող և խստորեն վերահսկվող միջոցառումները, ազգակերտման սկզբում ավելի շատ վարչարարներին

ուղղորդող գործիքներ էին, քանի որ թե՛ Թուրքիայում, թե՛ Ադրբեջանում հասարակություններն ընդհուպ մինչև 1940-50-ական թթ. գրածանաչ չէին: Արդյունքում այս բազմազգ երկրների էթնիկական միավորների ինքնությունները վերականգնվում էին գլխավորապես իշխանությունների քաղաքական կամքով սահմանափակված արժեքների և գաղափարների շուրջ՝ իշխանության պարտադրանքով, իսկ ինքնությանն անհրաժեշտ կոլեկտիվ գիտելիքը, այդ թվում՝ անցյալի մասին, իշխանության թելադրած դպրոցական դասագրքերի բովանդակության միջոցով:

Թուրքիայում կոմկրետ ինքնությունների հարցում «թուրք»-ից զատ խստորեն դատապարտվում էր նաև այլ էթնոկենտրոնների գործածությունը: Ադրբեջանում դրանք հաճախ պարզապես շրջանցվում, «մոռացվում» էին պետության կողմից, իսկ մարդահամարներում հաշվարարները նրանցից շատերին գրանցում էին որպես «ադրբեջանցի»: Այդպես «ադրբեջանցի» դարձան կովկասալեզու լեզգիների, ավարների, ռուսոլների, ցախուրների մեծ մասը, հափիները, ջեկերը, իրանալեզու թաթերի, թալիշների մեծ մասը:

Իր հետազոտություններում Հ. Խառատյանը վերլուծում է երկու երկրների ժողովրդագրական քաղաքականությունը, այդ թվում՝ քրդերի բռնի դեպորտացիան, էթնիկական խառնարանների ստեղծումը, այլազգիների հանդեպ բռնության այլ ձևերը, ինչպես Թուրքիայում Դեմիսի (Թուրքիայի) ալեվի և հայ բնակչության կրկնակի ցեղասպանությունը 1937-38 թթ., կամավոր տեղաշարժերի սահմանափակումները, այնպես էլ էթնիկական և նույնիսկ լեզվական ինքնությունների, անգամ դրանք հնչեցնելու արգելանքը (ընդհուպ մինչև 1980-ական-

ներն արգելված էին «քուրդ էթնանունը» և «քրդերեն լեզվանունը» արտասանելը կամ գրելը, իսլամացած հայերին և հույներին «հայ» և «հույն» անվանելը) և այլն: Ադրբեջանում նույն նպատակին էին ծառայում կեղծվող մարդահամարները, իրենց հայրենիքի տարածքում ապրող ամբողջ ժողովուրդների նույնիսկ էթնանունները «մոռանալը» մարդահամարների ցանկերում, «ադրբեջանցի» բառը որպես երկրի քաղաքացիներ կայացնելով՝ այդ բառի էթնիկացումը, ինչպես նաև այդ նորաստեղծ երկրամասում ռեպրեսիվ օգտագործելով՝ երկրի տարածքի ողջ պատմական անցյալն էթնիկապես ադրբեջանացնելը:

Առանձին հոդվածներով Հ. Խառատյանը վերլուծում է Թուրքիայում և ԽՍՀՄ-ում էթնիկական միավորների իշխանություններին ցանկալի հիշողության ձևավորման քաղաքականությունը, որի նպատակներից մեկը հասարակության հիշողությունից Հայոց ցեղասպանության փաստը և Արևմտյան Հայաստանի տարածքի ընկալումը՝ որպես հայերի հայրենիք, դուրս մղելն էր:

Մրցույթը շահած աշխատանքի տարբեր հարցադրումներ վերջին հինգ տարիներին՝ 2018-2022 թթ., հրատարակվել են 3 մենագրություններով և 9 գիտական հոդվածներով: Ընդհանուր առմամբ վերջին տասը տարիներին թեմայի շրջանակներում հեղինակի կողմից հրատարակվել է 42 աշխատանք, որից 7-ը՝ արտասահմանում: Աշխատանքներում մեծ ծավալով ընդգրկված են նաև հեղինակի հավաքած դաշտային նյութերը՝ հարցազրույցները Թուրքիայի գավառներում և Ստամբուլ քաղաքում, այդ թվում՝ քրիստոնյա և իսլամացած (քրդացած, արաբացած, ալեվիացած, թրքացած, ինչպես նաև իսլամացած, բայց հայկական ինքնությունը պահպանած) հայերի, զազախոս և քրմաճախոս ալեվիների, թուրքմեն ալեվիների և քրդերի հետ, իսկ Ադրբեջանի դեպքում՝ Արցախի բնակչության, Հայաստանում և Ռուսաստանի Դաշնությունում հայտնված փախստական հայերի, ուղիների և ասորիների հետ: Սրանք գիտական շրջանառության մեջ դրված բացարձակապես նոր նյութեր են, որոնք, թույլ են տալիս նոր հարցադրումներ առնել և նոր երանգներ բացահայտել երկու երկրների պաշտոնական պատմագրության շարադրանքներում:



Հ. Խառատյանի աշխատանքներում գրքերում և հոդվածներում, վերլուծվում են եվրոպական մոդելի «ազգային պետություն» ստեղծելու մտադրությունների մասին հայտարարությունների իրականացման գործողությունները և «ազգային պետություն» հասկացության՝ թուրքական և ադրբեջանական մեկնաբանությունները, մասնավորապես թուրքական և ադրբեջանական էթնոստեղծման քաղաքականությունը որպես «ազգային պետության տեղական առանձնահատկություն» ներկայացնելու միտումները: Երկու երկրներն էլ սկզբից ենթադրում էին «ազգային պետություն» ստեղծելու ծրագիր չունենի, երկուսի նպատակն էլ երկրների քաղաքական սահմաններում ապրող հատակ էթնիկական ինքնություններով կամ դեռևս այդ ինքնությունը չունեցող խառը բնակչությանը «ազգային ինքնության» փոխարեն ընդհանուր «էթնիկական ինքնություն» պարտադրելն էր:

Աշխատանքներում վերլուծվում են 20-րդ դարի «էթնոկերտման/ազգակերտման» գործընթացները Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետությունների օրինակով՝ որպես «թուրք» էթնոսի և «թուրքական ազգի» նույնականացման, Ադրբեջանում ավելի ուշ՝ «թուրք», ապա «ադրբեջանցի» էթնոսի և ադրբեջանական ազգի ձևավորմանն ուղղված քաղաքականություն: Այդ գործընթացները Հ. Խառատյանը քննարկել է երկրների կառավարման մեջ ներառված քաղաքական բռնությունները, էթնիկական դեպորտացիաները, լեզվի, էթնանունների, անձնա-



Սգ թգ մայիսի 18-ին լրացավ 33 ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի երջանկահիշատակ տնօրեն, բ.գ.դ. Վարդան Դևրիկյանի ծննդյան 60-ամյակը:

Մայիսի 21-ին Գրականության ինստիտուտում տեղի ունեցավ Վ. Դևրիկյանի ծննդյան 60-ամյակին նվիրված միջոցառում և «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում» գրքի շնորհանդեսը: Ներկայաներ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Դևրիկյան մարդուն, հայրենիքի գինժորին, գիտության անխոնջ մշակին, ով հասցրեց մաս ղստերը Ծողակաթ Դևրիկյանին փոխանցել իր սերը դեպի գրականությունը ու արվեստը և նրա հետ համահեղինակությամբ ընթերցողի սեղանի դնել «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում» գիրքը: Ինստիտուտի տնօրեն, բ.գ.թ. 3. Որսկանյանը նշեց, որ ժամանակն ի գորու չէ խամրեցնելու Վ. Դևրիկյանի լուսավոր հիշատակը, այնքան անշահախնդիր ու ազնիվ է անցել նա իր երկրային ուղին:

33 ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը հիշատակի իր խոսքում ընդգծեց Վ. Դևրիկյանի մեծատառով Մարդ լինելը, գնահատեց նրա գիտական նվաճումները, նվիրվածությունը ընտանիքին, ինս-

ՎԱՍՏԱԿԱԾԱՏ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ. ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ (Հուբ-Ֆերեհոյթ՝ ծննդյան 60-ամյակի առթիվ)

տիտուտին, վճռականությունն ու համարձակությունը՝ մշտապես լինելու առաջնագծում:

33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվ. դոկտ., պրոֆ. Ա. Ասատրյանը նշեց, որ համեստ մարդ լինելով՝ Վ. Դևրիկյանը երբեք չէր նշի իր ծննդյան 60-ամյակը, առավել ևս՝ չէր դիմանա Արցախի հայաթափմանը: Նա թողել է բարի հիշատակ և գիտական մեծ ժառանգություն: Իր լավագույն ստեղծագործությունն իր դուստրն է՝ Շ. Դևրիկյանը, որ սովորում է Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում:

33 ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ա. Դոլուխանյանը արժևորեց Վ. Դևրիկյանի գիտական գործունեությունը ու վաստակը՝ համոզմունք հայտնելով, որ մտավորականի նրա կերպարի ձևավորման վրա մեծապես ազդեցություն է ունեցել հայագետ Ղևոնդ Ալիշանը: Վ. Դևրիկյանի բոլոր աշխատությունները մնայուն են, արժեքավոր: Դրանք գրված են պարզ, մատչելի և նվիրված են կարևորագույն խնդիրներին:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Կ. Մաթևոսյանը, գնահատելով Վ. Դևրիկյանին իբրև ընկեր, նշեց, որ նա թողել է գիտական արժանի ժառանգություն՝ ունենալով լայն, համապարփակ գիտելիքներ գիտության տարբեր ուղղություններում:

Վ. Դևրիկյանի ծննդյան 60-ամյակի առթիվ հիշատակի իր խոսքը հղեց 3այր Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանը՝ կարևորելով հայագետի վաստակը և գործունեությունը՝ կապված մաս Վենետիկի Միսիոնարյան միաբանության հետ:

«3այկական հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր, տնօրեն, քիմ. գ.դ. 3ովի. Այվազյանն ավ-

ստամբ հայտնեց, որ Վ. Դևրիկյանն անժամանակ հեռացավ, ուժերի ծաղկման շրջանում, թեև հասցրեց մեծ վաստակ թողնել միջնադարյան գրականության, ձեռագրագիտության, արվեստի ոլորտներում: 3անրայնորեն գործուն անհատ էր՝ քաջատեղյակ մեր պատմությանը:

Բ.գ.դ., պրոֆ. 3. Էդոյանը հիշեց, որ իբրև ուսանող՝ Վ. Դևրիկյանը լարվում էր քննությունների ժամանակ, թեև միշտ գերազանց էր պատասխանում: Նա մշակ էր լավագույն իմաստով՝ խոնարհ, առանց մեծամտության որևէ նշույլի: Միջնադարագետ էր բառի բուն իմաստով և խորապես հոգևոր մարդ:

Բ.գ.դ. Ս. 3ովհաննիսյանը բարձր գնահատեց գրականագետին, զինվորին, մարդուն, որոնք Վ. Դևրիկյանի մեջ ներդաշնակ միասնություն էին կազմում: Նրա մեջ միայն ազգային էր, հայկականը: Նրա վերջին խրամատը 33 գիտությունների ազգային ակադեմիայում էր: Պայքարը ակադեմիայի համար էր, և այդ պայքարից ոչ մի քայլ չհաճանջեց:

Բ.գ.թ. 3. Որսկանյանն ներկայացրեց Վ. Դևրիկյանի և Շ. Դևրիկյանի «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում» գիրքը՝ նշելով, որ այդ աշխատությամբ Վ. Դևրիկյանը լրացրեց «3այ գիրքը աշխարհի խաչմերուկներում» եռահատորը, լրացրեց իր ձեռագիր մատյանի վերջին էջը՝ նվիրաբերելով այն Ս. Էջմիածնին: Փաստառատությամբ լի գիրքը լիակատար պատկերացում է տալիս Ս. Էջմիածնի տպարանի և թղթի գործարանի հիմնման պատմության, Ամստերդամի հայկական տպարանի հետ կապի, բոլոր այն անասելի դժվարությունների մասին, որոնց միջով անցել են Սիմեոն Ա Երևանցի և Դուկաս Ա Կարնեցի կաթողիկոսները՝ գիտակցելով հայ մշակույթի ու լուսավորության

տարածման գործում Ս. Էջմիածնի տպարանի դերն ու նշանակությունը:

Գրքում Էջմիածնի հրատարակչությունների շատերը ներկայացվում են իբրև արվեստի բարձրարժեք գործեր՝ համապատասխան փորագրապատկերների, մանրանկարների զուգորդությամբ և վերլուծությամբ, զուգահեռներ են տարվում հայ ձեռագրային ավանդների և ժամանակի արևմտաեվրոպական գրքարվեստի հետ:

3. Որսկանյանը նշեց, որ աշխատության մեջ միջգիտակարգային համալիր մո-



տեցմամբ ցույց է տրվում ժամանակի պատմական եկեղեցա-քաղաքական այն միջավայրը, որով պայմանավորված են եղել Ս. Էջմիածնի հրատարակչությունները:

3աջողություն մաղթելով Շ. Դևրիկյանին՝ 3. Որսկանյանը հուշեց, որ իր գիտական գործունեության ճանապարհին նա շատ ու շատ պատգամներ կցոլանի Վ. Դևրիկյանի գրքերում:

33 ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ



33 ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատող 3ասմիկ Եգորյանը «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում իրականացվող «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականներին խրախուսման մրցույթի» շահառուներից է:

3ասմիկ Եգորյանը մրցություն ներկայացրել է «Synthesis of 1-Amino-3-oxo-2,7-naphthyridines via Smiles Rearrangement: A New Approach in the Field of Chemistry of Heterocyclic Compounds» հոդվածը: Այն տպագրվել է «International Journal of Molecular Sciences» ամսագրում, որը «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում, ըստ տվյալ կատեգորիայի ամսագրերի դասակարգման, առաջին (Q1) քառորդի ամսագրերից է: 3ողվածի համահեղինակներն են՝ քիմիական գիտությունների դոկտոր Սամվել Սիրականյանը, Սալոմեիկ Արիստոտելի անվան համալսարանի պրոֆեսոր Աֆինա Գերո-

Երիտասարդ գիտնականի ամբիոն. Հասմիկ Եգորյան

նիկակին, Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Դոմենիկո Սպինելլին, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վիկտոր Կարյու, 33 ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատողներ Անուշ 3ովակիմյանը և Էլմիրա 3ակոբյանը:

«Այս մրցույթի շահառու դառնալը շատ ոգևորիչ է և խթան՝ հետագա մրցույթներին մասնակցելու համար, որոնք հնարավորություն կտան՝ գիտական հետազոտություններն ավելի արդյունավետ կատարելու և միջազգայնացնելու», - նշում է 3ասմիկ Եգորյանը:

- Ո՞րն է Ձեր աշխատանքի նորույթը, ի՞նչ կարևորություն ունի այն:

- Մարդկությունն իր գոյության ընթացքում պարբերաբար առնչվում է զանազան հիվանդությունների, վարակների և համաճարակների, և նոր դեղամիջոցների ու պատվաստանյութերի փնտրողը միշտ անհրաժեշտ և արդիական է: Մեր գիտական խումբը զբաղվում է ալիցիկլո[ց]- և հետերոցիկլո[ց]ալիդիդների նոր ածանցյալների սինթեզով և դրանց հատկությունների ուսումնասիրությամբ՝ նպատակ ունենալով հայտնաբերելու նոր, ավելի արդյունավետ, ընտրողաբար ազդող և քիչ թունավոր դեղամիջոցներ: Մրցույթին ներկայացված աշխատանքը մեր լաբորատորիայում իրագործվող գիտական հետազոտությունների ուղղությամբ է: Աշխատանքի նորույթն այն է, որ առաջին անգամ սինթեզվել են 1-ամինո-3-օքսո-2,7-նաֆթիրիդիններ, որոնք հնարավորություն են տալիս իրա-

կանացնելու նոր, պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ հետերոցիկլիկ համակարգերի՝ ֆուրո[2,3-ց]-2,7-նաֆթիրիդինների ածանցյալների սինթեզ: Այսինքն՝ մենք սինթեզել ենք բարձր հակավիրուսային ազդեցությամբ միացություններ, որոնք ունեն լավ հնարավորություն՝ վերածվելու ավելի արդյունավետ դեղամիջոցների:

- Ինչո՞ւ ընտրեցիք հենց քիմիկոսի մասնագիտությունը:

- Քիմիան իմ համար ամեն ինչ է, այն ամենուր է: Դպրոցն ավարտելուց հետո առանց տատանվելու ընտրել եմ երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը: Ներկայում ունեն չորս գիտական հոդված, որոնք տպագրվել են «Mendeleev Communications», «International Journal of Molecular Sciences», «Molecules, Arkivoc» միջազգային հեղինակավոր ամսագրերում, և երեք միջազգային թեզիս:

- Ի՞նչ դժվարությունների հետ է բախվում երիտասարդ գիտնականը 3այաստանում: Ինչպե՞ս եք գնահատում պետության աջակցությունը երիտասարդ գիտնականներին:

- Դժվարությունները հիմնականում կապված են ֆինանսավորման հետ, նորագույն սարքերի՝ մեր դեպքում քիմիական ռեակտիվների և լուծիչների բացակայության հետ: Վերջին տարիներին բարձրացվել է գիտնականների աշխատավարձը, ինչը, կարծում եմ, գիտության զարգացման առաջնահերթ քայլերից է: Գիտության կոմիտեի կողմից կազմակերպվում են բազմաթիվ մրցույթներ, որոնց շնորհիվ հնարավոր է ձեռք բերել

ժամանակակից սարքավորումներ, ինչը նպաստում է գիտական հետազոտությունների որակի բարձրացմանը:

- 3այաստանում գիտության զարգացման համար ի՞նչ դերակատարում ունեն «Գիտութ»-ը և այլ գիտական մախաձեռություններ:

- Գիտական մախաձեռությունների դերը գիտության զարգացման, հանրայնացման գործում մեծ է, և ինքս շատ արժևորում եմ այն:

- Ո՞րն է Ձեր գիտական գործունեության ընթացքում ամենատպալորիչ իրադարձությունը:

- 2022 թ. Թբիլիսիում կայացած միջազգային գիտաժողովում «Լավագույն պոստեր» մրցանակին արժանանալը:

- Ինչո՞ւ եք զբաղվում աշխատանքից դուրս, ի՞նչ նախասիրություններ ունեք:

- Ուսումնասիրում եմ մասնագիտական գրականություն, օտար լեզուներ: Սիրում եմ ճանապարհորդել, ազատ ժամանակ ֆիլմեր դիտել:

- Ի՞նչն է Ձեզ համար ամենակարևորը կյանքում և գիտության մեջ:

- Թե՛ կյանքում, թե՛ գիտության մեջ ամենակարևորը հաջողակ լինելն է: Իմ պատկերացմամբ դա նպատակների և երազանքների մեծ մասին հասնելն է:

- Ի՞նչ կարգախոսով եք առաջնորդվում:

- Երբեք կանգ չառնել դժվարությունների առաջ և հասնել իմ նպատակներին:

Սոնիկա ԵՐԻՅԱՆ



ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Մայիսի 14-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական արահում անցկացվեց ուշագորավ աշխատաժողով-գիտագործական քննարկում՝ «Աղվանից եւ Հայ Աղվանից եկեղեցին» թեմայով: Այն կազմակերպել էր Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը՝ ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների աջակցությամբ: Միջոցառմանը մասնակցում էին պատմաբաններ, արևելագետներ, մշակութաբաններ, ինչպես նաև հոգևորականներ և Արցախի ու Աղվանքի պատմությամբ հետաքրքրվողներ: Ինչպես նախատեսել էին կազմակերպիչները, բանախոսությամբ հանդես եկան տվյալ գիտական բնագավառի երկու առաջատար մասնագետներ՝ պատմ. գիտ. դոկտոր Ալեքսանդր Զակոբյանը և պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, «Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը)» հիմնարար աշխատության հեղինակ և Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարի նախկին խորհրդական Մելանյա Բալայանը: Նիստը վարում էր պատմաբան, ԱՀ մշակույթի նախկին նախարար Լեռնիկ Զովհաննիսյանը:

Այն սկսվեց Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես արքեպիսկոպոս Աբրահամյանի Տերունական աղոթքով, ով արցախցիների՝ 2023 թ. բռնագաղթից հետո շարունակում է պաշտոնավարել Հայաստանում՝ ՆՍՕՏՏ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:

Առաջին բանախոս Ա. Զակոբյանը ընդարձակ ելույթով անդրադարձավ պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան հարևան և հայ թագավորների մշտական դաշնակից Կովկասյան Ալեքանդր-Աղվանք-Առան կոչված երկրի պատմության ու մշակույթի հիմնական խնդիրներին՝ հնագույն շրջանից մինչև միջնադար՝ կարևորելով Կուրից հյուսիս գտնվող Բուն Աղվանքի և նրանից հարավ ընկած Հայ Աղվանքի կամ Հայոց Արևելից կողմանց առանձնահատկությունները: Նա շեշտեց երկու առանցքային հանգամանքների ընկալման կարևորությունը՝ Բուն Աղվանք երկրի բնակչության շարունակաբար բազմացելը մնալը և մինչև ժամանակ՝ ցեղերի էթնիկ համախմբման գործընթացի արդյունքում աղվանական հավաքական ընդհանրության՝ մետաէթնոսի ձևավորումը:

Շեշտվեց նաև, որ V դարի առաջին կեսին, երբ 428 թվականին Մեծ Հայքում վերացվեց Արշակունյաց արքայատոհմի թագավորությունը, և Հայաստանը վերածվեց Սասանյան Իրանի մի մարզապետության, նրա հյուսիսարևելյան Ուտիք և Արցախ նահանգները Բուն Աղվանքի հետ միավորվեցին Աղվանք անվանումով առանձին մարզապետության մեջ: VI դարի սկզբին այդ մարզապետության մայրաքաղաքը, ապա նաև Աղվանից եկեղեցու նստոցը հաստատվեցին հայկական Ուտիք նահանգի նորակառույց Պարտավ քաղաքում: Հետագա-

յում այն դարձավ նաև Աղվանքի քրիստոնյա բնակչության ինքնավարությունն ապահովող «Աղվանից իշխանի» հաստատության կենտրոնը: Այդպիսով, Աղվանք անունը տարածվեց նաև Ուտիքի և Արցախի վրա: Ընդսմին, Աղվանից եկեղեցին՝ որպես առանձին թեմ, մտնում էր Հայ առաքելական եկեղեցու մկրտապետության մեջ:

Բանախոսը ներկայացրեց նաև «Գիտություն» հրատարակչության՝ Երևանում վերջերս լույս ընծայած իր 2 գրքերը՝ նվիրված Հայոց Արցախի և հարևան Աղվանք-Ալբանիայի քաղաքական պատմությանը, աղբյուրագիտությանը և պատմական աշխարհագրությանը: Առաջինը հրատարակվել է 2020 թ.՝ «Արքայատոհմներն ու իշխանատոհմները Բուն Աղվանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար» վերտառությամբ: Երկրորդ մենագրությունը, որը հեղինակի՝ 1987 թվականի ռուսերեն հիմնարար աշխատության վերամշակված տարբերակն է, հրատարակվել է 2022 թ.՝ «Ալբանիա-Աղվանքը հունա-լատինական եւ հին հայկական աղբյուրներում» խորագրով:

Երկրորդ բանախոս Մ. Բալայանն անդրադարձավ, VI դարից սկսած, Հայաստանի և տարածաշրջանի պատմամշակութային կյանքում Հայ Աղվանից եկեղեցու խաղացած նշանակալից դերին՝ շեշտելով, որ այն կարևոր ու անբաժան մասն է կազմել Հայ առաքելական եկեղեցու: 552 թվականին՝ քաղաքական և դավանաբանական տարբեր զարգացումներից հետո, վերջնականապես ամրապնդվեց Պարտավի Աղվանից կաթողիկոսությունը, և կաթողիկոս ընտրվեց Աբաքը՝ Արցախի Մեծառանից Ս. Զակոբյանի առաջնորդը: Բանախոսի փաստարկներով Մեծ Հայքի Ուտիք նահանգի Պարտավ քաղաքի նստավայրում աթոռակալել են Արցախի և Ուտիքի, իսկ ավելի սակավադեպ նաև՝ Բուն Աղվանքի հոգևոր կենտրոններից ընտրված 19 կաթողիկոսներ: Հետագայում՝ XIII դարում, կաթողիկոսանիստը տեղակայվել էր Մեծառանից Ս. Զակոբյանի մոտ, իսկ XIV դարում տեղափոխվեց ու վերջնականապես հաստատվեց Արցախի Խաչեն գավառի հոգևոր կենտրոն Գանձասարի վանքում:

Բանախոսները հանգամանալից պատասխանեցին աշխատաժողովի մասնակիցների բազմաթիվ հարցերին, որից հետո եղան ելույթներ և քննարկում: Կարծիքներով ու առաջարկներով հանդես եկան ներկա գիտնականները և հոգևորականները: Հիմնական մտահոգությունն էր՝ ավելի խոր գիտելիքի շնորհիվ հնարավորինս տեղ կանգնել մեր մշակույթին: Դրա առիավատյան էին նաև Տեր Վրթանես Սրբազանի ավարտական օրհնանքն ու աղոթքը:

Ալեքսան ԶԱԿՈԲՅԱՆ,
Չորհրաք ԸՈՔՈՅԱՆ

Երբ արթնանում է ցեղի ոգին...

«Մեր կենսագրությունը չի ունեցել և չի ունենա վերջին վերջակետ...»
«Ազգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Մարատյան երկրի վրա: Թուրքը, կոտորած ու ավեր փռելով, գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք ինչ առաջարկում են ոտխի բերանին թողնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովրդի վերջին կտորը: Ոչ և ոչ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջնադասումը կասեցնել, եթե ի զորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կ'ընկնեմ Մայր տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ Աթոռից: Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչու չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ողորմելի սարուկի պես ոտխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջությամբ ներկված նահատակների արյամբ: Դրանով չեն սպառվել մեր արյունը և ուժը: Դարեր շարունակ հայ ազգն ապրել է ինքնության համար պայքարելով: Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և չի ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչու ազգովին չքարշարանաք թշնամու դեմ, որը գալիս է՝ ծարավ մեր վերջին արյունին...»:

Գևորգ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆԸ
Շովկապետ Ամենայն Հայոց



Ամենայն Հայոց քաջասիրտ կաթողիկոսի մարգարեական ու ազգափրկիչ այս կոչը հնչել է առավել քան մեկ դար առաջ, օրհասական այն օրերին, երբ 1915-ի եղեռնագործությունից հետո շնափղծ ոտխը վճռել էր մույն նախճիրով բնաջինջ անել նաև արևելահայությանը՝ հազեցում տալով հայ արյան իր ծարավին: Նրանք, խախտելով 1917-ի դեկտեմբերի 5-ին երզնկայում կնքված զինադադարի պայմանները, ներխուժում են Արևելյան Հայաստանի տարածք՝ անցնելով Ախուրյան գետը, մտնում Ալեքսանդրապոլ, այնտեղից ուղղություն վերցնում դեպի երկրի սիրտը՝ Արարատյան դաշտ, Էջմիածին, Երևան՝ առաջ բերելով անասելի իրարանցում և սարսափ:

1918 թ. թուրքական 36-րդ դիվիզիան ներխուժում է Արարատյան դաշտ, գրավում Սարդարապատից ընդամենը 10 կիլոմետր հեռու գտնվող «Արաքս» կայարանը, որով անցնում էր Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգիծը: Երկրում տիրում էր համընդհանուր խուճապ: Շատերն առաջարկում էին նահանջել Սևանի ավազան և այնտեղից պաշտպանվել: Հայկական զորքերի երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանը, ով իր հրամանատարական կետը հաստատել էր Գևորգյան հոգևոր ճեմարանի շենքում, Մայր տաճարից մոտ 100 մետր հեռավորության վրա, Երևանի ապագա պարետ Արշո Շահխաթունու ուղեկցությամբ մայիսի 19-ին ներկայանալով կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, նրան առաջարկում է անվտանգության համար տեղափոխվել Բջնի, Բյուրական կամ Սևան: Կաթողիկոսը կտրուկ մերժում է: Երկու օր անց՝ մայիսի 21-ին, Արամ Մանուկյանը,

մույն Շահխաթունին և Պողոս Բեկ-Փիրունյանն են Երևանից ժամանում Մայր Աթոռ՝ մույն առաքելությամբ և կրկին հորդորում Վեհափառին տեղափոխվել նախ Երևան, ապա՝ Սևան: Սակայն հաստատական կաթողիկոսը սառն անտարբերությամբ մերժում է նրանց խորհուրդը ևս. «Եթե հայ զորքն ու ժողովուրդը ի վիճակի չեն պաշտպանելու այս սուրբ վայրերը, ապա ես ինքս մենակ սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր տաճարի գավթում, բայց չեմ հեռանա մեր պապերի ավանդ մնացած Մայր Աթոռից...»:

Այնուհետև կաթողիկոսը կարգադրում է ահազանգ տալ Մայր տաճարի զանգակատնից: Միաբանության անդամներին, որոնք գալիս ու հավաքվում են նրա շուրջը, դիմում է հայտարարությամբ. «Մեզ խորհուրդ են տալիս լքել Մայր Աթոռը և հեռանալ Սուրբ Էջմիածնից: Ես ինքս մնում եմ, ձեզանից ովքեր ցանկանում են գնալ, ազատ են, կարող են գնալ...»: Սակայն միաբանները ոչ միայն չեն հեռանում, այլև ավելի են համախմբվում Վեհափառի շուրջը:

Երևանից ժամանածներին ճանապարհելով՝ կաթողիկոսն իջնում է Վեհարանից և քայլերն ուղղում դեպի Մայր տաճար, որտեղ Իջման սուրբ սեղանի առաջ արտասովոր աչքերով երկար ու երկար աղոթում է: Ապա տաճարի կամարների տակ երկինք է առաքվում հուզիչ «Տեր ողորմեա»-ն, և սկսում են դուղանջել Մայր տաճարի ու հայր բոլոր եկեղեցիների զանգերը: Հետագա ութ օրերի ընթացքում՝ մայիսի 22-29-ը, գիշեր-ցերեկ անդադար դողանջում են վտանգված Նաիրյան երկրի ազգահավաք զանգերը՝ հորիզոնից հորիզոն: Այդ զանգերը սթափեցնում, խանդավառում են բոլորին, մղում անձնագոհության ու համագգային պայքարի: Գաղթական ու արյունաքան ժողովուրդը ելնում է ի գնդ: Բաշ Ապարանում, Դարաքիլիսայում, Սարդարապատում ջարդվում է անհազուրդ բորենու արյունոտ երախը: Թուրքական 36-րդ դիվիզիան, որ կոչվում էր Գալիպոլոս (Դարդանելյան) և, իբր, փառավորվել էր Գալիպոլի ճակատամարտում, շանսատակ եղած՝ դիմում է փախուստի:

Արթնացել էր ցեղի ոգին: Արթնացել էր ամենուրեք: Արթնացում, որ ազդարարեց երջանկահիշատակ Վեհափառը՝ ասպետական ու ազգաշունչ իր կոչով ու հավերժահունջ դողանջներով Հայոց խնկաբույր եկեղեցիների...

Խոնարհում մասունքված շիրմիդ, ազգընտիր ՎԵՂՈՓԱՆ...

Հակոբ ՄՐԱՊՅԱՆ



30 տարի շարունակ «Գիտություն» թերթը «Մայիսը մեր հաղթանակների ամիսն է» խորագրի ներքո նյութեր է հրապարակել մայիսյան հաղթանակներում Ավարայրի ճակատամարտում, Սարդարապատի հերոսամարտում, Մեծ հայրենականում և Շուշիի ազատագրման մարտերում հայ ժողովրդի սխրագործությունների մասին:

Հասկանալի պատճառներով տոնական տրամադրությունն այս տարի փոխարինվել է մեր երկրի ապագայի հանդեպ ունեցած խոր մտահոգությամբ, սակայն, հիշել մեր պատմության հերոսական էջերը, առավել ևս դրանցից դասեր քաղել՝ մենք պարտավոր ենք:

ՄՏԻՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Մեր երկիրը հայտնվել է մեծագույն մարտահրավերների հորձանուտում: Արտաքին ուժերի բացահայտ նկրտումներին դիմակայելու համար անհրաժեշտ են ազգային շահերին համահունչ ճշգրիտ և խելացի գործողություններ, օբյեկտիվ իրականությունից բխող տրամաբանական քայլերի հաջորդականություն: Ցավոք, դրանք այսօր տեսանելի չեն, փոխարենը բավարարվում ենք խնդրողի և զիջողի կարգավիճակով, իսկ թույլի կեցվածքը և պատերազմի սպառնալիքով ժողովրդին մշտապես վախի մթնոլորտում պահելը կործանման տանող ճանապարհ է:


«Ամեն մի ժողովուրդ արժանի է իր իշխանություններին» հին ու հայտնի այս ա-

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՄՈՒԱՑ Հ ԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Հիմա մեր պատմության ոչ ոյուրին և ծանր հանգրվանում ենք: Այն, ինչ կատարվեց Հայոց բնօրրան Արցախի հետ, բնականաբար չի կարող չփոփոխել յուրաքանչյուրիս հոգին ու ներաշխարհը: Բայց արի ու տես, որ այս ցավալի իրավիճակին հասցրած անմիջական պատասխանատուներն այս խառնակ ժամանակներում անգամ, բան ու գործը թողած, ջանում են ձևախեղել Հայրենիք, հայրենասիրություն, հաղթանակ, հերոս հասկացությունները՝ համարելով կեղծ կատեգորիաներ, այնինչ մեր ժողովրդի համար դրանք



միշտ էլ եղել են բարձրագույն արժեքներ: Ժամանակն է թոթափել մեզ համակած հուսալքությունն ու անորոշությունը, համախմբվել և տեր կանգնել երկրին, ապրել հույսով ու հավատով, որ 1994 թ. մայիսյան հաղթանակը Հայոց հազարամյա պատմության ընթացքում արձանագրված բազում հաղթանակների թվում չի դառնա վերջինը: Միշտ հիշենք մեր մեծերի պատգամը՝ աղերսաթղթի փոխարեն երկաթե շերեփ, ազգային ոգու զարթոնք և միասնականություն: Ու մենք դեռ կունենանք նոր մայիսներ...



Հաղթանակներ կարելի է ապահովել ոչ միայն ռազմի դաշտում: Դրանց կարելի է հասնել նաև դիվանագիտության, մշակույթի, գիտության և այլ ասպարեզներում, իհարկե եթե դրանք չեն վերածվում փորձադաշտի: Ցավոք, մենք այսօր այդ բնագավառների հետևողական կազմաքանդման լուռ վկաներն ենք, իսկ մեր լռությամբ՝ նաև մասնակիցները:

Ստորև ընթերցողին ենք ներկայացնում որոշ մտահոգություններ այսօրվա իրողությունների շուրջ և ակնկալում գիտական հանրության արձագանքը:

ԽԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հետևողականությամբ:

Պատերազմում կրած պարտությունից, Արցախի հայաթափումից և կորստից հետո, ամեն ինչ զրո կետից սկսած դիվանագիտության լրջագույն սխալներից դասեր քաղելու և իրավիճակը սթափ գնահատելու փոխարեն իշխանությունները շարունակ մեղավորներ են փնտրում ամենուր և ամեն ինչում, բացի իրենցից: Հասարակական կյանքում ատելության և թշնամանքի քարոզը, ինչ ուզում, այն էլ անում ենք կարգախոսի հեղինակների անտրամաբանական գործողությունները, ի վերջո, կարող են հանգեցնել հասարակական մեծ ցնցման՝ իր տխուր հետևանքներով հանդերձ: Լրջագույն մտահոգությունների տե-

մամբ ներկայացրեց մի ցնցող միտք. «Քանի որ աղբբեջանցիները մեզանից հեռու են ընդամենը 50 մետր, ճիշտ կլինեի խրամատների փոխարեն այգիներ տնկել և նրանց հետ առևտուր անել» և հնչեցրեց մի կոչ. «Պատրաստ եղեք զոհաբերության. զոհաբերե՛ք ձեր ընտանեկան անդրորդ, ձեր նախնիների հիշատակը»: Արդարացի կլինեի, որ նման կոչի հեղինակներն անձամբ ցույց տային՝ առաջին օրինակը զոհաբերելով իրենց իսկ զբաղեցրած պաշտոնները: Այսօր հաճախ ենք լսում խելացի բառով ստեղծված նոր բառակապակցություններ՝ խելացի տուն, խելացի ժամացույց, անգամ խելացի անասնագու: Կգա՞ արդյոք մի ժամանակ, որ

ջից դուրս գալու իրատեսական ուղիներ:

Հանրային ճնշման և հակազդման բացակայությունը պարարտ հող է ստեղծում մարտնչող տգիտության շարունակական դրսևորումների համար: Պետք է դուրս գալ տնամերձի կաղապարված հոգեբանությունից, կրավորական, անտարբեր ու ամեն ինչին համակերպվողի դերին հակադրել քաղաքացիական ակտիվ դիրքորոշում:

Եկեք ընդունենք նաև, որ այս «տխուր և դժգույն» իրավիճակի պատասխանատուն մասամբ նաև մենք ենք՝ մեր անտարբերությամբ ու լռությամբ: Այսպես շարունակվելու դեպքում մենք շատ քանակ գին կվճարենք: Քանի դեռ ուշ չէ, պետք է համախմբվել և գործել համարձակ, գործել սրտի և մտքի թելադրանքով: Երբ վտանգված է երկրի ապագան, մտավորականը լռելու իրավունք չունի:

Հ.Գ. Այս հրապարակումը պատրաստ էր տպագրության, երբ Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, «Հայ, Հայաստան, Հայրենիք ու Աստված» կարգախոսով Հանրապետության հրապարակը լցվեց հոծ բազմությամբ: Ժողովրդի լայն զանգվածների հերթական պոռթկումը գոնե այս անգամ ճիշտ ուղղորդելու և վերջնականորեն հասցնելու համար անհրաժեշտ է բոլոր ուժերի համախմբված և կշռադատված գործողությունների հաջորդականություն:

ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

...Բավ է տանջանքում իրար դեմ սրվեց, թշնամում թողած մենք իրար ատենք, Բավ է տանջանքից անտարբեր դարձած, Դարձած եսասեր, դարձած մորթապաշտ, Դեռանա՞նք, փախչենք մեր հայրենի ՏՃԻց ու տեղից, Մասիսի փեշից, Եվ կռվում դաժան մի կտոր հացի Օտար աշխարհում փնտրենք տուն ու տեղ: Հարկավոր է հույս ու մեկ էլ հավատ, Մեր է հարկավոր այս դաժան ցրտում: Մոմեր ենք վառում երեք տեղ հիմա Մեր սառը օջախում, Ընկած մարտիկի հեզ գերեզմանին Եվ եկեղեցում...

Զէ՛, աղերսավոր մոմերը պետք չեն, Բավ է աղաչանք, բավ է ծնկաչոք, Մեզ կրակ է պետք, խարույկ ու հրդեհ, Որ մեզ տաքացնի, որ այրի, այրի... Այրի մեր նախնյաց կրակի բոցով, Հայրենյաց սիրով և ընդվզումով Մեր ապագայի հրացուքի պես, Հանուն մեր կորչող, փոքրացող հողի Հանուն ընտանյաց ու հանուն ցեղի, Հանուն մեր վաղվա փյունիկվող ազգի...

Էդուարդ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒՒԹՅԱՆ ԳԻՆԸ

սույթի իմաստն առավել քան հասկանալի է այժմ, երբ ուշադիր հետևում ես մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի զարգացումներին: Այսօր հայ հասարակությունը պառակտված է, դարձել է անտարբեր ամեն ինչի հանդեպ, որին նպաստում են թե՛ իշխանությունների գործողությունները և թե՛ ընդդիմադիր որոշ ուժերի ամբիցիաներից ծնված անհամերաշխությունն ու անգործությունը:

Վերջին տարիներից մեզ պատուհասած ցնցումներից ու մեծագույն կորուստներից հետո ժողովրդի ճնշող մեծամասնությունը ենթարկվել է լրջագույն բարոյաև հոգեբանական սթրեսի: Ահավոր հիասթափությունն ու հուսալքությունը, դրան գումարած իշխանությունների քաղաքական խաղաքարտերի մանիպուլյացիոն խառնաշփոթից առաջացած անորոշությունը նրան դարձրել են ավելի խոցելի, ու նա կամա թե ակամա ստանձնել է անտարբեր դիրքորդի դերը: Զարմանալի է, թե այսքանից հետո դեռ էլ ինչ պիտի լինի, որ վերջնականապես լցվի նրա համբերության բաժակը: Հիշենք ԱՄՆ նախկին նախագահ Ա. Լինքոլնի հանրահայտ խոսքերը. «Կարելի է հիմարացնել ժողովրդի մի մասին մշտապես, կարելի է հիմարացնել ամբողջ ժողովրդին մի որոշ ժամանակ, սակայն անհնար է հիմարացնել ամբողջ ժողովրդին մշտապես»:

Իշխանությունները պարբերաբար քաղաքական օրակարգ են ներառում ժամանակավորեա, երկրորդական, հաճախ նաև արհեստածին հարցեր, որոնց անիմաստ քննարկումներն ավելի են խորացնում հասարակական կյանքում առկա լարվածությունը: Միամիտ պետք է լինել կարծելու, թե դա չիմացության և փորձի պակասի հետևանք է: Նրանք այդ անում են ծրագրված և նպատակադրված

դիք են տալիս նաև Հայ առաքելական եկեղեցու շարունակական վարկաբեկումները և Հայոց ցեղասպանության գոհերի թվաքանակի ճշգրտման անհեթեթ մտքերի շրջանառումը: Ո՞ւն ջրաղացին ենք ջուր լցնում...

Ժողովրդի ուշադրությունը շեղելու նպատակով հատկապես վերջին շրջանում հրապարակ են նետվում «զաղափարներ», որոնք ոչ մի աղբյուր չունեն նորոյա իրողություններից հետո և համահունչ չեն մեր ազգային շահերին: Հայրենասիրությունը, վտանգավորե գաղափար համարող և պատմագիտությունից հեռու կանգնած անձինք, իմաստունի կեցվածք ընդունելով, հրամցնում են պատմական դեպքերի և դեմքերի գնահատման սեփական մոտեցումները, որոնք անմիջականորեն թիրախավորում են հայոց պատմական հիշողությունն ու ազգային նկարագիրը:

Մանավանդ վերջին շրջանում առավել ակտիվացել են մտացածին որոշ բառակապակցությունների անհեթեթ հակադրություններն ու շահարկումները՝ «Հայրենիք-պետություն», «Արարատ-Արագած», «Պատմական և իրական Հայաստան» և այլն: Զբավարարվելով ժողովրդի տարբեր հատվածներին միմյանց հակադրելով՝ այժմ էլ սկսել են մեր պատմական անանց արժեքներն այսօրվա իրողություններին հակադրելու փորձերը՝ հայտարարելով, որ «Պատմական Հայաստանը և իրական Հայաստանը ոչ միայն համատեղելի չեն, այլև հաճախ հակոտնյա են միմյանց»: Մի՞թե դրա ժամանակն է, կամ արդյոք դա մեզ պե՞տք է: Մարդկային բանականությունը պարզապես ի գորու չէ ընկալելու նման աբսուրդային մտքերը:

Վերջերս Ցավուշի մարզում վարչապետը գյուղացիներին դրական երանգավոր-



ԸՇ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նոր ուսումնասիրությունները

ՀՀ ԳԱԱ Հրաչյա առյանի անվան լեզվի ինստիտուտում «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում բացահայտվել են նախագրաբարյան որոշ երևույթների արձագանքներ Արցախի բարբառում: «Սա վկայում է հնագույն ժամանակներից Արցախում հայերենի գործածության մասին,- ասաց գիտական խմբի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Մխիթարյանը: Որպես օրինակ նա նշեց, որ գործիական հոլով Արցախի և Մեղրու բարբառներում կազմվում է *-ալ* ձևությամբ: Պարզել ենք, որ բարբառային *-ալ*-ը հնաբանություն է՝ բնորոշ եզերական բարբառներին»,- ասաց նա:

Գրաբար-բարբառ փոխհարաբերությունների շրջանակում ինստիտուտի գիտաշխատողները հետաքրքիր դիտարկումներ են արել նաև Արցախի բարբառի ցուցական դերանունները քննելիս: Գրաբարի ցուցական դերանուններն են *սա, դա, նա, այս, այդ, այն, տոյն, դոյն, մոյն*, որոնցում առկա են *ս, դ, ն* արմատական բաղաձայնները, սրանք սկզբնապես ունեցել են *սո, դո, մո* ձևերը: «Հայերենի այդ շարքն այնքան հին է, որ որևէ օտար լեզվի ազդեցություն դժվար է պատկերացնել: Արցախի բարբառի ցուցական դերանուններն են *ես, ետ, էն, ըստի / իստի, ըսի / իսի, ընդի / ինդի*: Ի դեպ, *ըստի / իստի, ըսի / իսի, ընդի / ինդի* դերանունները գրաբարի *աստի, անդի* բառերի բարբառային արտահայտություններն են»,- ասաց Գայանե Մխիթարյանը:

Լեզվի ինստիտուտի մասնագետները քերականական մի շարք իրողությունների պարզաբանման հարցում ուշադրություն են դարձրել գրավոր և բանավոր հաղորդակցության առանձնահատկություններին: Գրավոր և բանավոր խոսքի տարբերական վարկածը հիմնավորելու համար իրականացրել են V դարի գրավոր աղբյուրների մանրագին քննություն՝ համատեքստի բնույթի պարզաբանում: «Հետազոտությունները որոշակի նյութ են տալիս ոչ միայն բարբառային հայերենի, այլև հայոց լեզվի պատմության որոշ հարցերի պարզաբանման, քերականական տարբեր կարգերի զարգացման յուրահատկությունների լուսաբանման համար»:

Ինստիտուտի Հայոց լեզվի պատմության բաժնում հետազոտվել են նաև բառապաշարի իմաստային (թեմատիկ) մի շարք խմբերի արտահայտություններ հայերենի զարգացման տարբեր փուլերում: Միջին հայերենի բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից միջնադարյան

բժշկարանները կարևոր սկզբնաղբյուր են, քանի որ դրանցում արձանագրվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ գործածված բազմաթիվ բառեր, որոնց մի ստվար մասը բժշկական տերմինի արժեք ունեցող ախտանուններ, դեղանուններ, կազմախոսական բառեր են: Դրանք համակարգային քննության են ենթարկվել Մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ իմաստային (թեմատիկ) խմբում: Արձանագրված են բազմաթիվ բառեր, որոնք գործածվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ: Ուշագրավ են հատկապես կենդանիների անվանումներով բաղադրված ախտանունները, որոնք մատնանշում են ոչ միայն կենդանիներին, այլև մարդուն վերաբերող մի շարք հիվանդություններ: Գործածվել են կենդանիների (*արծիվ, գայլ, գորտ, ուղտ, խեցգետին, հավ, ձի (քունռակ), մուկ, մրջյուն, պախար*) անվանումներով կազմված մոր ախտանունները, որոնք վկայված չեն գրաբարյան մատենագրության մեջ և գործուն կիրառությամբ աչքի են ընկնում հենց միջնադարյան բժշկարաններում:

«Օրենք» իմաստային (թեմատիկ) խմբում էլ լեզվաբանները հետազոտել են Գրիգոր Տաթևացու երկերում արձանագրված իրավական հասկացությունները, որոնք հետաքրքրություն են ներկայաց-

նում թե՛ հայագետների, թե՛ իրավագետների համար: Քննության ենթարկված իրավական հասկացությունները փաստում են, որ դրանք երբեմն վկայված են նույն իմաստով, կան իմաստային տեղաշարժերի դեպքեր, և կան չվկայված բառեր: «Սա նշանակում է, որ գործ ունենք նորակազմ բառերի հետ, օրինակ՝ *ազգաքինը, դատելիք*: Դիտարկվել են նաև հեղինակային նորակազմություններ, և հասկացությունները համեմատվել են գրաբարի բառապաշարն ամփոփող բառարանների նյութի հետ»,- ասաց Գայանե Մխիթարյանը:

Հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական հանդեսներում, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, ազդեցության գործակից ունեցող միջազգային «Language and Culture» համդեսում:

Հետազոտությունները շարունակական բնույթ են կրում, նյութերը տպագրության են ներկայացվել նաև Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարանների շարքում դասվող հանդեսներում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Վաթսուն տարուց ավելի «Ռադիո Մոսկվա» (այնուհետև՝ «Ռուսաստանի ծայր») պետական ??ռադիոընկերության անգլերեն ծառայությունն աշխարհի միլիոնավոր ռադիոստորիններին հաղորդային Միության և Ռուսաստանի մասին պատմել է մի հայազգի հաղորդավար: Նրա անունն էր Իոսիֆ Հմայակի Աղամով, որին ունկնդիրների բազմամիլիոնաց լսարանը ճանաչում էր որպես Ջո Աղամով:

Նա հիացնում էր իր բարձր երողիցիայով, համակողմանի կրթությամբ, ռադիոստորների ցանկացած հարցի (այդ թվում՝ ամենասարդիչ) դիպուկ պատասխան տալու ունակությամբ, հունորի մեծ զգացումով, ինչպես նաև իր անթերի ամերիկյան անգլերենով:

Ջտարյուն հայ էր Իոսիֆ Աղամովը. ծնվել էր 1920 թ. Բաթումում: Յոթ տարեկան էր, երբ հայրը՝ Հմայակ Աղամովը (Աղամյան), պաշտոնի է նշանակվել Լոնդոնում՝ ԽՍՀՄ ??ռադիոների կազմակերպչությունում, ուստի Իոսիֆն ընդունվել է բրիտանական դպրոց: Հետագայում, երբ ընտանիքը վերադարձել է Մոսկվա, նա ուսանել է տեղի հատուկ ամերիկյան դպրոցում, որտեղ սովորում էին Մոսկվայում աշխատանքի հրավիրված ամերիկացիների զավակները: Իոսիֆի բրիտանական անգլերենը փոխարինվել է ամերիկյանով, անգամ նա

Իոսիֆ Աղամով. Մոսկվայի հայազգի անգլերեն «ծայրը»

սկսել է խոսել ԱՄՆ-ի այս կամ այն շրջանին հատուկ առոգանությամբ:

1942-ին՝ Մոսկվայի մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո, Աղամովը սկսել է աշխատել որպես ռադիոհաղորդավար՝ ժամանակի ընթացքում դառնալով բարձրակարգ լրագրող, որի համար կարծես թե չեն եղել խոչընդոտներ: Վաթսուներկու տարի շարունակ Ջո Աղամովն աշխատել է ռադիոյում: Աղամովը ծայրահեղ զգուշավոր ու պատասխանատու էր իր յուրաքանչյուր խոսքի համար: Նա եղել է ամերիկացի օդաչու Գարի Փաուերսի դատավարության պաշտոնական թարգմանիչը, ով 1960 թ. լրտեսական գործունեություն է իրականացրել ԽՍՀՄ տարածքում և դատապարտվել 10 տարի ազատազրկման: Աղամովը միշտ ասել է, որ ինքը քաղաքականության հետ ոչ մի կապ չունի, ոչ մեկի չի ծանաչում Կրեմլում, և ոչ էլ Կրեմլում գիտեն իրեն, երբեք խնդիրներ չի ունեցել իշխանությունների հետ, չնայած, անշուշտ, գլխավոր խմբագիրը միշտ լսել է իր հաղորդումները՝ նախքան դրանց հեռարձակումը:

Աղամովը հարցազրույցներ է վարել արևմտյան բազմաթիվ քաղաքական գործիչների և լրագրողների հետ, այդ թվում՝ Ռուայթ Դ. Էյզենհաուերի և Էլիմոր Ռուզվելտի: Նրան ծանաչել են միջազգային լրատվամիջոցների այնպիսի վարպետներ, ինչպիսիք են Ուոլթեր Բրոնքիթը, Ֆիլ Դոնախյուն և Լարի Քինգը: Աղամովը հաճախ է հրավիրվել արտասահման (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա և Ավստրալիա)՝ դասախոսելու և ելույթներ ունենալու հանրաճանաչ թրջշուներում: Ինչպես հեռուստալրագրող Վլադիմիր Պոզները, Աղամովը ևս դարձել է ԽՍՀՄ-ը և Ռուսաստանն աշխարհին ներկայացնող եզակի լավագույն դեմքերից մեկը: Խորհրդային ղեկավարները գալիս էին և

զնուն, իսկ Աղամովն անգլիալեզու աշխարհի համար տասնամյակներ շարունակ մնում էր Խորհրդային Միության թերևս լավագույն մարմնավորումը: Ասում էին, որ Արևմուտքում նա շատ ավելի հայտնի էր, քան ԽՍՀՄ Կենտկոմի քաղբյուրոյի անդամների մեծ մասը:

Ջո Աղամովը, սակայն, ընդունել է, որ իր մեկնաբանություններում հաճախակի է քննադատություն հնչեցրել Միացյալ Նահանգների հասցեին: «Մենք չենք ցանկանում նսեմացնել ձեր երկիրը,- մի անգամ ասել է նա իր ունկնդիրներին,- մենք պարզապես խնդրում ենք ձեզ չհամաձայնել ձեր արտաքին քաղաքականությանը»: Մի անգամ մի հուսախաբված ունկնդիր Աղամովին հարցրել է, թե նա կարո՞ղ է որևէ դրական բան ասել ԱՄՆ-ի մասին: Աղամովն ասել է. «Ինձ դուր են գալիս ձեր մեքենաները: Հավանում են ձեր սուպերմարկետները: Ինձ հիացնում է ամերիկացիների արդյունավետությունը, երևույթների նկատմամբ բիզնեսային մոտեցումը»: Այնուհետև երկար դադար է եղել, որից հետո Աղամովն ասել է. «Եթե ինձնից լուր չունենաս, իմացի՛ր, որ ես Սիբիրում եմ» ու ծիծաղել է, լռել է մի պահ, ապա նորից ծիծաղել իր իսկ ծիծաղի վրա...

Իր բազմամյա գործունեության ընթացքում Աղամովը պատրաստել է պրոֆեսիոնալ հաղորդավարների, թարգմանիչների և լրագրողների մի քանի սերունդ: Նրան շնորհվել են մի շարք պետական ??պարգևներ՝ Խորհրդային ռադիոյի զարգացման գործում իր մեծ ներդրման համար: Ու թեև գրեթե 20 տարի է անցել նրա վախճանից, սակայն շարունակվում են երախտագիտական գրառումները համացանցում տեղադրված նրա նյութերի տակ...

Արծվի ԲԱՆՉԻՆՅԱՆ
բանասիրական
գիտությունների թեկնածու

ԴԱՐԻ ԼԵԳԵՆԴԸ Շառլ Ազնավուր-100



1924 թ. մայիսի 22-ին Փարիզում ծնվել է մեծանուն երգահան, երգիչ, բանաստեղծ, կինոդերասան, բարերար, հասարակական գործիչ, հայ և ֆրանսիացի ժողովուրդների արժանավոր զավակ, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրը:

«Պետք է գիտակցենք, որ ունենք գեղեցիկ մի երկիր, որը պետք է զարգացնել, այլապես այն մի օր կարող է անհետանալ այնպես, ինչպես որոշ հին քաղաքակրթություններ: Իսկ դրա պատասխանատվությունը կկրեն հայերը»:

ՆԻԿՈԼԱՅ ԸՈՎՇԱՆՆԵՍԻ ԸՈՎՇԱՆՆԻՍՅԱՆ



Ս/թ. ապրիլի 24-ին կյանքից հեռացավ ականավոր գիտնական և հասարակական գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, հայ ժամանակակից արաբագիտական պատմագիտական դպրոցի հիմնադիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննեսի Յովհաննիսյանը:

Նիկոլայ Յովհաննիսյանը ծնվել է 1930 թ. հունիսի 10-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1956 թ.՝ ասպիրանտուրան: 1968 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1971 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. նա ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ: Նա 563 գիտական աշխատությունների հեղինակ է, որից 87-ը մենագրական ուսումնասիրություններ են: Նիկոլայ Յովհաննիսյանի գիտական ղեկավարությամբ ավելի քան 50 պատմաբաններ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, այդ թվում՝ Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Հորդանանից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից:

Պրոֆեսոր Յովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և արդի հայ արևելագիտության հիմնադիրներից է: Նրա ջանքերով Հայաստանում հիմնադրվեց, կայացավ և արևելագիտության ոլորտում իր ուրույն տեղը գրավեց հայ արաբագիտությունը: Նա ՀՀ-ում արաբագիտական պատմագիտական դպրոցի կարևոր հիմնասյուներից է, ով ավելի քան 40 տարի (1962-2003 թթ.) ղվապահել է արաբական երկրների բաժնի, 1995-2006 թթ. զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Անգնահատելի են Նիկոլայ Յովհաննիսյանի գիտական վաստակը և ներդրումը համաշխարհային արաբագիտության զարգացման բնագավառում: Նրա բեղուն գիտական գործունեության արդյունքում հայ արաբագիտությունը դարձել է համաշխարհային արաբագիտության կարևոր բաղադրիչը:

Տասնյակ տարիներ պրոֆեսոր Յովհաննիսյանի ուսումնասիրությունների կենտրոնում եղել են արաբական երկրների նորագույն պատմության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, քաղաքական իսլամի, հայ-արաբական, այդ թվում՝ միջպետական հարաբերությունների արդիական հիմնահարցերը: Նա առաջիններից էր, ով խորհրդային Հայաստանում անդրադարձավ արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությանը և ընթերցողի սեղանին դրեց արժեքավոր մենագրություններ՝ «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում», «Սիրիական անկախ հանրապետության ստեղծումը», «Ազգային-ազատագրական շարժումն Իրաքում», «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը» և այլն:

Պրոֆեսոր Յովհաննիսյանի ուսումնասիրություններում կարևոր տեղ է զբա-

ղեցնում «Արաբական երկրների պատմություն (VII դ.- 2005 թ.)» քառահատոր աշխատությունը, որը բացառիկ է իր նշանակությամբ և 2007 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի, իսկ 2011 թ. թարգմանվել է արաբերեն և հրատարակվել Հայեպոստ:

Նիկոլայ Յովհաննիսյանի ուսումնասիրությունների շրջանակից դուրս չեն մնացել նաև էթնոքաղաքական հակամարտությունների, այդ թվում՝ Ղարաբաղյան հիմնախնդրի հետազոտությունը՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը. անկախության և ազատության փնտռանքներ», ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում հրատարակված «Էթնոքաղաքական առճակատումներն Ամերիկայում» և այլն:

Պրոֆեսոր Յովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շարքում հատուկ տեղ էր զբաղեցնում Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ «Հայոց ցեղասպանություն. հայասպանությունը որպես ամենագեոքոգիային գեոքոգի. Աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հունգարերեն, ճապոներեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն», միջգիտակարգային հետազոտությունը, որին ավելի ուշ ավելացան նաև կորեերեն և ռումիներեն հրատարակությունները: Այս հիմնարար աշխատանքն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի դիպլոմի: Նիկոլայ Յովհաննիսյանի ջանքերով միջազգային լայն տարածում է ստացել «Արմենոցիդ» եզրը՝ որպես «Հայասպանության» հոմանիշ:

Զգալի է Նիկոլայ Յովհաննիսյանի ներդրումը նաև հասարակական կյանքում: Նա զբաղեցրել է խորհրդարարական բարեկամության և մշակութային կապերի ասոցիացիայի փոխնախագահի պաշտոնը, եղել է Ափայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարեկամության ընկերության փոխնախագահ և այլ ընկերությունների վարչությունների անդամ, մասնակցել տարբեր երկրների բարձրաստիճան պետական այրերի հետ բանակցություններին:

Նիկոլայ Յովհաննիսյանն արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ էր, այդ թվում՝ Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Գերմանիայի Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության, ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության, Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի և այլն:

Պրոֆեսոր Յովհաննիսյանը պարգևատրվել է ՀՀ կառավարության «Հայոց Մեծ եղեռն» ոսկեգծ մեդալով, Մովսես Խորենացու, «Երախտագիտության», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի և այլ մեդալներով:

Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային կենսագրական կենտրոնը 2004 թ. Նիկոլայ Յովհաննիսյանին հռչակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005 թ.՝ ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական», իսկ 2009 թ.՝ ներառել «100 բարձրակարգ գիտնականների» ցանկում:

Խորին ցավակցություն ենք հայտնում Նիկոլայ Յովհաննիսյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ արևելագիտության մասնաճյուղ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գրիգոր Ղարիբյանը ոչ միայն անվանի տնտեսագետ է, այլ բնագավառի բազմաթիվ գործերի հեղինակ, այլև վաստակաշատ մանկավարժ է, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ԵՊՀ-ի երկար տարիների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, այլև գեղամկարիչ է ու գեղագետ:

Վերջերս լույս է տեսել նրա «Հիշողություններ» գիրքը, որի շարժառիթը հայ մշակավոր գեղանկարիչ և հասարակական գործիչ Գևորգ Բաշինջաղյանի որդուն՝ Զաքար Բաշինջաղյանին ներկայացնող հիշողությունն է:

Նա երկար տարիներ եղել է Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչը: Համալսարանում վերջինս ունեցել է գիտական ու մանկավարժական ծանրակշիռ հեղինակություն, եղել է իսկական մտավորական, բազմակողմանի զարգացած գիտնական, որը հիմնալից ներ-

նեցնելու խնդրում: Նա ևս Սայաթ-Նովային համարում էր հանճար ու իր հերթին ժողովրդի բանավոր խոսքից գրառում էր նրա խաղերը:

Գրքում ներկայացվում է Մարտիրոս Սարյանի՝ Բաշինջաղյանի արվեստին տված գնահատականը. «Գևորգ Բաշինջաղյանը Կովկասի հրաշալի քնարերգուն է, երգիչը Արարատի, Կազբեկի, Սևանի: Նա զգում էր լեռների վեհությունը, ծորերը, դաշտավայրերը՝ ստեղծելով մերձնչված կտավների շարք»:

Պետերբուրգում սովորելու տարիներին Բաշինջաղյանը մի անգամ չէ, որ եղել է համաճարեղ ծովանկարչի արվեստանոցում. նա Այվազովսկուն կոչել է «գեղանկարչության Վիկտոր Դյուգո»:

Էրմիտաժը հին վարպետների գործերով դառնում է Բաշինջաղյանի համար երկրորդ արվեստի ակադեմիա:

1884-ին նկարիչը ճանաչողություն է եվրո-

ՆՈՐ ԳԻՐՔ
ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆՆԵՐԻ
ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

գործություն է ունեցել իր սաների վրա ու մնացել ամուռաց:

Գրքում զետեղված է 1965-ին «Երևանյան Երևան» թերթում տպագրված Գրիգոր Ղարիբյանի՝ Զաքար Բաշինջաղյանի 70-ամյակին նվիրված հոբելյանական հոդվածը: Հոդվածն առավել տեսանելի ու տպավորիչ է դառնում այն ֆոտոնկարներով, որոնք ներկայացնում են պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Զաքար Բաշինջաղյանին տանը և համալսարանական գործունեության մեջ:

Գիրքը բացառիկ արժեք է ստանում նրանում զետեղված մեծատաղանդ նկարիչ, նվիրյալ հայրենասեր Գևորգ Բաշինջաղյանի կյանքն ու գործը ներկայացնող գիտական ուսումնասիրությամբ, որը 1986 թ. ռուսերենով հրատարակվել է Մոսկվայում:

Ուսումնասիրության հեղինակը Գևորգ Բաշինջաղյանի թոռնուհին է՝ Նաթելա Բաշինջաղյանը, որն իսկապես փայլուն ներկայացնում է իր պապի գեղանկարչության տեղն ու դերը հայ դասական արվեստի մեջ, մեծ նկարչի ուսումնառության, եռանդի, նվիրումի և կատարելության հասնելու ողման ողջ ընթացքը:

Բաշինջաղյանը եղել է նորարար հայ գեղանկարչության մեջ: Նա բնանկարը հայ արվեստում դարձրեց առանձին, տպավորիչ ու չմոռացվող ժանր: Պատահական չէ, որ Ավետիք Իսահակյանը գրել է. «Մեր սերունդը հիացած էր նրա ստեղծագործություններով, և մենք նրա նկարների ցուցադրումը բաց չէինք թողնում»:

Ինչպես վկայում է Բաշինջաղյանի թոռնուհին, հայ այն մտավորականները, որոնք ձգտում էին կատարելագործվել արվեստի ու գիտության տարբեր բնագավառներում, մեկնում էին սովորելու Մոսկվա, Պետերբուրգ, Փարիզ, Մյունխեն ու Եվրոպայի այլ նշանավոր քաղաքներ, ու նրանց ճանապարհը փշոտ էր, լի նյութական զրկանքներով:

Բաշինջաղյանն իր համար որպես թեմա բացահայտեց հայրենի երկրի բնությունը ու այն դարձրեց իր համար գեղագիտական խնդիր: Նա հայ հնագույն գեղանկարչությանը ներարկեց եվրոպական բնանկարի ավանդույթները, որը դրսևորվեց գեղագանց արվեստով: Ինչպես գրված է հետազոտության մեջ, առաջին անգամ հենց գեղանկարչության մեջ երկգագաթ Արարատը և Սևանի կապույտը դարձան կորցրած և վերագտնված հայրենիքի խորհրդանշանները:

Գևորգ Բաշինջաղյանը ակտիվ մասնակցել է Հովհաննես Թումանյանի հիմնած «Վերնատան» աշխատանքներին ու մեծ դեր է ունեցել Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցում անմահ Սայաթ-Նովայի շիրմաքարը կանգ-

պայում. այդ իրավունքը նրան տվել էր 1883-ին վրձնած «Կեչիների պուրակ» նկարը, որի համար Պետերբուրգի մրցույթում ստացել էր արծաթե մեդալ: Իտալիայում նա այցելում է արվեստի գլուխգործոցներով հարուստ քաղաքներ՝ Ֆլորենցիա, Վենետիկ, Հռոմ, Նեապոլ: Հետո այցելում է Շվեյցարիա:

Հայտնի է, որ Հանլետի եղբայր դերակատար Պետրոս Աղանյանը նաև նկարում էր ու արվեստի մեծ գիտակ էր: 1885-ին «Նոր դար» պարբե-

րականում նա հանդես է գալիս Բաշինջաղյանի արվեստին նվիրված հոդվածով, որի մեջ գրում է. «Սա նոր և արժեքավոր տաղանդ է, որի վրձինը իրենով բերում է իրականության և քնարականության կնիքը»:

Երկար ամիսներ Բաշինջաղյանը շրջել է Հյուսիսային Կովկասում, Արևմտահայաստանում, Կենտրոնական Վրաստանում: Նա ուշադիր զննել է բնության տեսարանները: Կարծես հետևել է Վերածննդի իսկա Լեոնարդո դա Վինչիի պահանջին, որը մարդկանց պատվիրում էր. «Բացե՛ք ձեր աչքերը»:

Բաշինջաղյանի լավագույն նկարները ստեղծվել են 1890-1915 թվականների ընթացքում: Դրանցից են «Վաղ գարուն» (1890), «Սևանը ամռան օրը» (1903), «Սևանա լիճը լուսնյակ գիշերով» (1914): Հատկապես կոթողային է «Արարատ. Հերկած դաշտ» (1912) նկարը: Այս վերջին նկարը մեծ խորհուրդ ունի իր մեջ. կարծես երկու Արարատները իսկում են հայի համար այնքան սիրելի և մշտապես մշակված Արարատյան դաշտը ու նկարչի սիրելի ազգի խաղաղ կյանքը:

1884-ին է նկարված «Խաչատուր Աբովյանի տունը Քանաքեռում» կտավը, որն ամփոս վկայում է, թե նկարիչն իր արվեստի ուղղվածությամբ Աբովյանի հոգեզավակն է և նրա երազանքների իրականացնողը: Նույնքան խորիմաստ է «Սուրբ Ղազարի կղզին գիշերով» բնանկարը: Նկարի կենտրոնում լույս է, որը խորհրդանշում է Մխիթարյանների միաբանությունից հայ ազգին ուղղված լուսավորչական գործունեությունը:

Նաթելա Բաշինջաղյանի՝ իր պապի արվեստը մեկնաբանող ուսումնասիրությունը գրված է արվեստագետի գիտելիքների մեծ պաշարով ու խորաթափանցությամբ:

Ցանկալի է, որ այն կարդան ուսանողները, որպեսզի իմանան, թե ինչ նշանավոր նախնիներ են ունեցել հայերը, ու որքան նվիրված են եղել հայրենիքին ու նրա պատմությանը:

Անկախ ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



ՈՒՇԱԳՐԱՎ ՎԱՐԿԱԾ

ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻՆ ԵՂԵ՛Ղ Է ԱՐԴՅՈՒՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրական, պատմագիտական և աղբյուրագիտական հարուստ նյութերը համադրելու և վերլուծելու շնորհիվ Կ. Ջարյանը հանգել է այն եզրակացության, որ Վերածննդի դարաշրջանի մեծագույն մտածողն ու արվեստագետը, իրոք, եղել է Չայաստանում: Այդ մասին են վկայում հենց Լեոնարդո դա Վինչիի նամակները, որոնք փաստում են 1470-ական թվականներին Կիլիկիայում նրա շրջագայության մասին: Լեոնարդոն այնքան վառ գույներով է նկարագրում Տավրոսյան լեռները, այդտեղ տեղի ունեցած տարերային աղետը (երկրաշարժ և ջրհեղեղ), որ կասկածի տեղիք չի մնում Կիլիկիայում մի քանի ամիս նրա գտնվելու արժանահավատության մասին:

Կոստան Ջարյանը իրավացիորեն նշում է. «Լեոնարդո դա Վինչին երբ որոշեց մեկնել մի հեռավոր երկիր, հարց է ծագում, ինչո՞ւ նա ընտրեց Չայաստանը, Երմենիա, ինչպես ինքը գրում է: Չէ՞ որ Չայաստանը այլևս անկախ չէր, և Կիլիկիայում մասն աճեցել էր Եգիպտոսին: Եվ, սակայն, ամբողջ իր գրվածքի մեջ նա միշտ շեշտում է Երմենիա անունը և անտեսում է Եգիպտոսի անունը»:

Ատլանտյան մատյանե կոչվող Լեոնարդո դա Վինչիի ծեռնարկում կա հետևյալ հիշատակումը. «Գտնվելով Չայաստանի այս կողմում... մտա Կալինդրա քաղաքը, մեր սահմանների մոտ, Տավրոսյան լեռների այս կողմի ծովափում, Եփրատից բաժանված և ի տես Մեծ Տավրոսի, որ ցցված է արևմտյան կողմում»:

Այնուհետ Լեոնարդո դա Վինչին գրում է Կիլիկիային պատուհասած տարերային աղետի մասին. «Չայաստանի արևմտյան վարի ողողումը, որ առաջ եկած է Տավրոս լեռան ճեղքվածքի պատճառով... Արևելյան Չայաստանի վարի մասի ողողումը, որին ցամաքեցնելու համար անհրաժեշտ է ծանապարի բանալ Տավրոսյան լեռների միջից»: Լեոնարդոյի գրառումներում անդրադարձ կա նաև տարերային աղետին հաջորդած հրդեհի մասին, որը կապ չուներ աղետի հետ և առաջ էր եկել «30.000 սրիկաների պատճառով, որոնք քարուքանդ արին երկիրը և շարունակում են բանդել: Սակավաթիվ վերապորոհները ապաստանել են եկեղեցիների ավերակներում» մարդիկ ու կանայք, մեծ ու փոքր»: Կ. Ջարյանը կարծում է, որ Լեոնարդո դա Վինչին ականա-

տեսն է եղել հայկական հերթական ջարդի և եթե «անձամբ ապրած չլիներ այդ սարսափները, իբրև հեռավոր օտարական, երևակայել իսկ չափոյ կարողանար այդ ողբերգությունը»:

Կոստան Ջարյանը նշում է մի կարևոր մանրամասն ևս. «Լեոնարդոն, նկարչական գույների մասին խոսելիս, օգտագործում է տերրա Արմենա, որ մութ դեղնագույն է կամ բաց շականակագույն, որ ուրիշներ երբեք չեն գործացած: Պետք է ենթադրել, որ այդ գույնը, այդ հողը ինքն անձամբ բերել է Չայաստանից»:

Լեոնարդո դա Վինչիի նկարագրություններն այնքան տպավորիչ են, որ «Դրանք, անտարակույս, իսկապես զգացված, ապրած, ցնցված վկայի տպավորություններ են», - գրում է անվանի գրողը:

Այս ամենի մասին անհրաժեշտ տեղեկությունները քաղել ենք Կոստան Ջարյանի «Նավատունար» ուշագրավ ժողովածուից (Եր., 1999), որը կազմել և հարուստ ծանոթագրություններով համալրել է գրականագետ Յուրի Խաչատրյանը:

ԽԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չայաստանի գիտությունների ազգային ակադեմիա
ՊՈՒԿ-ը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ԳԱԱ
«Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների
խնայողություն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը
համալրելու համար

Գործադիր մարմնի պաշտոնի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել Չայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող, գիտական աստիճան և կազմակերպության մասնագիտական ուղղվածությունը (ուղղություններ) համապատասխան մասնագիտություն ունեցող, գիտակազմակերպական փորձ ունեցող, 65 տարին չլրացած անձը:

Հավակնորդը կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնի թափուր հաստիքի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է՝

ա) դիմում, որտեղ նշվում են հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաս-տատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), փաստացի բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

բ) ինքնակենսագրություն,

գ) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը,

դ) 1 գունավոր լուսանկար՝ 3x4 չափի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

ե) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները), բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը,

զ) գիտական աստիճանը և/կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

է) աշխատանքային գործունեությունը հավաստող տեղեկանք,

ը) առաջադրումը հաստատող փաստաթուղթ՝ առկայության դեպքում,

թ) կազմակերպության զարգացման ծրագիր,

ժ) հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ:

Չայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն, կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Հավակնորդները վերոնշյալ փաստաթղթերը հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում (ս/թ. մայիսի 27-ից հունիսի 27-ը ներառյալ) ներկայացնում են ՀՀ ԳԱԱ իրավաբանական և անձնակազմի կառավարման բաժին հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղդասարյան պող. 24, աշխատանքային ժամեր՝ 09:00-17:30, հեռ. 52-70-51 կամ էլեկտրոնային եղանակով հետևյալ էլեկտրոնային փոստին՝ persdep@sci.am:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

«ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ» պետական ոչ
առևտրային կազմակերպությունը հայտարարում է
մրցույթ՝ ինստիտուտի ժողովրդական երաժշտության
բաժնի վարիչի թափուր պաշտոնը
զբաղեցնելու համար

«ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ժողովրդական երաժշտության բաժնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Չայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) բարձրագույն երաժշտագիտական կրթություն,

բ) գիտական աշխատանքի 10 տարվա փորձ,

գ) արվեստագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան,

դ) գիտական ստորաբաժանման ղեկավարի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Չայաստանի Հանրապետության Սահմանադրություն, գիտության ոլորտի Չայաստանի Հանրապետության օրենսդրություն, իրավական այլ ակտեր):

«ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ժողովրդական երաժշտության բաժնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում,

բ) երկու լուսանկար 3x4 չափի,

գ) աշխատանքային գրքույկի պատճենը,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

զ) գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթը,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկը (լրացված),

ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,

թ) բնութագիր վերջին աշխատավայրից,

ժ) զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները անհրաժեշտ է ներկայացնել մինչև սույն թվականի հունիսի 26-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ:

Հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղդասարյան պողոտա 24/IV, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, հեռախոս՝ 58-37-02, 58-55-59:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈՒԿ-ը
հայտարարում է մրցույթ՝ ինստիտուտի Հին և Միջին
դարերի պատմության բաժինների վարիչների
թափուր տեղերի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց զանազան մակագույն չափանիշները հաստատելու մասին» Չայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Չայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է հայագիտություն և հունանիտություն (գիտությունների մասնագիտություններով) առնվազն երեք հրապարա-

կում ՄԳՇ-ում կամ մեկ մենագրություն.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հունանիտար գիտությունների մասնագիտություններով առնվազն երկուսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,

բ) ինքնակենսագրություն,

գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,

դ) լուսանկար,

ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

զ) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

է) վերջին հինգ տարիներին հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,

ը) բնութագիր վերջին աշխատավայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին:

Հասցեն՝ Երևան, Մ. Բաղդասարյան պողոտա 24/4, հեռախոս՝ 010581931:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ «Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտ» ՊՈՒԿ-ը հայտարարում է մրցույթ
ինստիտուտի Հայ հին և միջնադարյան գրականության
բաժնի վարիչի թափուր տեղի համար

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,

բ) երկու լուսանկար, անձնագրի և սոցիալական քարտի պատճենը,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,

թ) հրատարակված աշխատանքների ցանկ,

ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-56-32-54:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտ

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՅՈՎԱԿՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍՈՎԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասարյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 27.05.2024 թ.: